

ՏԱՄԱԿԱՆ ՏԱՐԻ

ՄԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները մեջ:

Օտարաբարությունը դիմում են ուղղակի
Դուքան, Редакция «Маяк»

Խմբագրատունը լայն է առաջ տեսնում 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիցիտով:

Ցայտարարությունների համար գնորդում են
խրատանիս ըստ 2 կոպեկի:

Մ Շ Ա Կ

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵՒԻ Է ԳՐԱԿԵԼ

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուրիսի 1-ից ներկայ 1881 թվ. մինչև յուրիսի 1-ը 1882 թվ.:

Բաժանորդություն հանձնելու և գինը 6 ռուբլ է: Գրվելու համար պետք է ուղղակի գիրքը խմբագրությունը հետևել հասցեով. Դուքան, Редакция «Маяк»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արևելեան օրգան—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ վաճառատնից, Նամակ Ս. Պետերբուրգից, Նամակ Շուշուց, Նամակ Խմբագրից, Ներքին լուրերի—ՄԱՍԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ֆեդերալիստ, Առաջին Ունիվերսալ, Արևելյան Արտաքին լուրերի—ԽԱՌՆ, ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳՐԱՐՆԵՐ, ԳԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՕՐԳԱՆ

«Մշակի» երկվայ համարում հրատարակված վիճակի նամակը մեզ տեղեկացնում է որ Աստուրիայի մայրաքաղաքում հրատարակվող «Journal d'Orient» շաբաթաթերթը համաձայնվել է դառնալ և հայոց օրգան:

Այդ լրագիրը քանի մի տարի է արդեն որ հիմնված է յատկապես արևելեան խնդիրը յուրեւելու և թերթի հաստատվելու ձևով վաճառվելու իրաւունքները պաշտպանելու նպատակով: Թերթը տարածվում է թէև բաժանորդների սահմանափակ շրջանում, բայց այդ շրջանը բաղկացած է ղլխաւորապէս արևելքի գործերով հետաքրքրվող ուսումնականներից, զիպլոմատիստներից, ինքնաշարժիչներից և եւրոպական պետական անձինքներից: Յուրեւ թերթաց հայերի հարցը, պաշտպանել հայոց խնդիրը այդ տեսակ քաղաքական թերթի մէջ մեծ նշանակութիւն կունենայ:

Որքան էլ ցանկալի էր մեզ համար որ Կիւլորթի պէս մի գիտական ձեռնարկէր հայոց օրգանին ֆրանսերէն լեզուով, բայց քանի որ նոր թերթը հիմնելը աւելի դժուար է, քան թէ արդէն եղածից օգուտ քաղել, պէտք է ուրախանանք, որ վիեննայի ֆրանսիական թերթը, որ յատկապէս նուիրված է արևելեան խնդրի պաշտպանութեան գործին, յանձն առաւ արևելեան միւս խնդիրներին զուգընթաց՝ թարգման հանդիսանալ և հայոց խնդրի:

Կիւլորթի ուսումնական է և մեծ աւուել ունի հայերի մէջ, որպէս հայագէտ, որպէս հայոց գիտութեանը և հին Հայաստանի հետազոտութեան գործին աջակցի ծառայութիւններ արած մարդ: Բայց եթէ յարգելի ֆրանսիացի ուսումնականը յանձն առնէր հայոց օրգանի հրատարակութեան գործը, նրան անշուշտ հարկաւոր կը լինէին օգնողներ պուրիցիստներից, քաղաքական գիտութեան և քաղաքական թերթ հրատարակելու գործին հմուտ անձինքներից: Գիտական լինել՝ ուրիշ բան է, պուրիցիստ լինել՝ ուրիշ բան է: Պուրիցիստը, իր գործը օրինաւոր կերպով առաջ տանելու համար, նոյնպէս պէտք է գիտական

լինի, բայց նրա գիտական հմտութիւնների շրջանը այլ է, քան թէ լեզուագէտի, հնագէտի:

Պուրիցիստը պէտք է յատկապէս ծանօթ լինի քաղաքականությանը, հասարակական և քաղաքական գիտութեանը հետ, բացի սորանից մեծ նշանակութիւն ունի լրագիրը հրատարակելու մի քանի տարվայ փորձառութիւնը:

Այդ պատճառով մենք համարում ենք, որ թղթակցի արած ջանքերը «Journal d'Orient» լրագրի խմբագրին յորդորելու իր թերթի մի բաժինը թիւրքաց Հայաստանի շահերին ծառայեցնելու, արդիւնաւոր կը լինեն: Մենք հասած կը լինենք մեր նպատակին, եթէ յիշեալ լրագրի իւրաքանչիւր համարի մի էջ միայն նուիրված կը լինի հայոց խնդրին, Հայաստանին:

Այժմ թէ ուստաց և թէ թիւրքաց հայերից կախված կը լինի պաշտպանութիւն ցոյց տալ վիեննայի ֆրանսիական թերթին, որ այդքան յօժարութեամբ յանձն առաւ թարգման հանդիսանալ թերթը քիսհայ օգուտներով: Այդ պաշտպանութիւնը ինչի մէջ պէտք է կայանայ. մի կողմից օրինաւոր թղթակցութիւնների մէջ: Պարզ է որքան մի լրագիր աւելի ներթ կունենայ, որքան աւելի գրաժական միջոցներ կունենայ, այնքան աւելի աջողութեամբ կը կարողանայ մշակել այս կամ այն հարցը:

Վիեննայի լրագիրը արդէն մշակում էր արևելեան խնդիրը. այժմ ունեւոր բազմաթիւ հայ բաժանորդներ, պարզ է որ կախաւոր այնպիսի ներթ ներկայացնել իր նոր բաժանորդներին, որ նրանց ուզածին համապատասխանի: Բացի սորանից, աւելի ներթական միջոցներ ձեռքում ունեւոր խմբագիրը կը կարողանայ հայոց խնդրի վերաբերութեամբ յատուկ աշխատանք պահել, ունենալ մի վարձատրված թարգման հայերէնից, հետեւի հայոց լրագիրներին, թարգմանել տալ յատկապէս իրան ուղարկվող հայերէն թղթակցութիւնների և ստացած տեղեկութիւնների ու փաստերի հիման վրա իր եզրակացութիւններն անել առաջնորդող յօդուածներում:

Որքան վիեննայի թերթը աւելի շատ բաժանորդներ կունենայ հայերի մէջ, այնքան նա աւելի էլ ջանքեր կանի և միջոց կունենայ անել իր այդ բաժանորդների պահանջին բաւականութիւն տալու համար, այնքան նա աւելի կը ջանայ մշակել հայոց խնդիրը և արևելեան միւս խնդիրների կարգում նրան ամենանշանաւոր տեղերից մինը յատկացնել:

Այժմ Թիւրքիայի և Ռուսաստանի հայերից է կախված դարձնել «Journal d'Orient» լրագիրը մի հայոց օրգան:

«Մշակի» № 133 մէջ տպված վիեննայի նամակում ասված է որքան արժէ թերթը մի տարվայ և կէս տարվայ համար և խմբագրութեան հասցէն էլ յիշված է նամակում:

Բաժանորդները կարող են ուղարկել լրագրի կէս տարվայ գինը իրանց հասցեով

կամ ուղղակի վիեննա, Вѣна (Австрія) M. F. Salles, Redacteur en chef du «Journal d'Orient» Rauchensteingasse № 10, կամ նոյնպէս «Մշակի» խմբագրութեանը, իսկ մենք յանձն ենք տանում հասցնել փողը և բաժանորդի հասցէն վիեննայի լրագրին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Յուլիսի 17-ին

Շատ գրգռեցաւ, շատ խօսվեցաւ մեր տեղական մամուլի մէջ այն հարցի մասին, թէ ԼՂԺԺԺ-ը մեր վիճակները կամ թողնում է առանց առաջնորդի, կամ փոխանակ եպիսկոպոսների, հասարակ վարդապետների է նշանակում: Այդ մասին ձայն բարձրացրեց, մինչև անգամ Կ. Պոլսի հայոց լրագրութիւնը:

Մինչև այժմ Թիֆլիսի և Խմբագրի նախնայի թերթը կառավարում էին եպիսկոպոսներ, բացի զբանից, ԼՂԺԺԺ-ի կաթողիկոսները, գործերն անձամբ հսկելու համար, իրանց ժամանակի մեծ մասը այդտեղ էին անցնում: Այժմ թերթը յանձնված է մի վարդապետի, Շուշու նշանաւոր թերթ առաջ կառավարում էին միտրոպոլիտներ, յետոյ եպիսկոպոսներ, այժմ մի վարդապետ է յանձնված: Երեսնի թերթ կառավարում էին եպիսկոպոսներ, այժմ վարդապետ է նշանակված: Այնքանապատու պիտի վիճակը վարդապետ է կառավարում: Գանձակի և Նուխու վիճակները վարդապետներ են կառավարում: Հարկ չը կայ մի բաւ միջոց թելաման տեղ վարդապետներ են նստած: Մի քանի վիճակներում, որպէս են Կարսը, Շամախին, Ատրախանը, Բեսարաբիան թէև եպիսկոպոսներ են նշանակված, բայց նրանց կողքին դրված է կամ ԼՂԺԺԺ-ի վարդապետ — գործակատարը, կամ մի լրտես քահանայ: Նշանաւոր գործերը դրանց ձեռքով են կատարվում: Եպիսկոպոսի անունն է միայն:

Ամեն վիճակում խրաբանչիւր տարի ձեռնադրվում են բազմաթիւ քահանայներ: Երբ վիճակաւոր առաջնորդը եպիսկոպոս է, շատ հասկանալի է, որ ձեռնադրութեան խորհուրդը նա կը կատարէ և եղած արդիւնքը ինքն կը ստանայ: Իսկ երբ վիճակը կառավարում է մի վարդապետ, նա ձեռնադրելու իրաւունք չունի: Այս պատճառով բոլոր տիրացունքներ, որոնք ցանկանում են քահանայ դառնալ, ստիպված են վիճակներից հեղեղել ԼՂԺԺԺ-ը, և այնտեղ ընդունել քահանայական կարգը:

Քահանայացուների համար ԼՂԺԺԺ-ում նշանակված է մի յայտնի մազանդար, իւրաքանչիւր պէտք է վճարէ Մանկունուն 500 ռուբլ, բացի դրանից, պարտաւոր է գնել մի ձայնագրեալ շարական 100 ռուբլով և մի հատ պատարագի արարողութիւն կուլված գրքից 10 ռուբլով: Այդ երկուսը միասին, եթէ հաշւէք նրանց տպագրութեան ծախսը, արժեն 5 ռուբլ:

«Մշակի» մէջ տպված թղթակցութիւններից երևաց որ 1880 թվին ձեռնադրվել են ԼՂԺԺԺ-ում 150 տիրացուներ: Պէտք է նկատողութեան առնել և այն, որ երբ մի որ և է տիրացու ձեռնադրվում է իր վիճակում, տեղային առաջնորդ եպիսկոպոսից, նա քահանայացուի արժանաւորութեան մասին այն ծուխի ժողովրդից, որի վրա հովիւ է ձեռնադրվում, վկայական է պահանջում: Բայց ԼՂԺԺԺ-ում հնչեացրել են գործը բաւական է, որ տիրացուն վճարէ Մանկունուն 500 ռուբլ, բաւական է որ 110 ռուբլով գնէ պարտաւոր գրքերը, — այնուհետև նրանից ժողովրդի վկայականը չի պահանջվում:

Վիճակաւոր առաջնորդների համար նշանակ-

ված է ուժիկ, որ նրանք պէտք է ստանան տեղային կոնստաբոլից: Եպիսկոպոսները ստանում են այդ ուժիկը իրանց ծախքերը հոգալու համար: Իսկ երբ նրանց փոխարէն յաջորդ-վարդապետներ են նշանակվում, այդ վերջինները կամ բաւականանում են փոքր ուժիկով, կամ պատրաստ են առանց ուժիկի էլ ստանալ ցանկացած տեղը: Իրանց օգուտները նրանք դուրս են բերում կոմսակի և միջին աղբիւրներից...

Ինչ է լինում վիճակաւոր եպիսկոպոսների համար նշանակված ուժիկը, — այդ զուամբները կոնստաբոլիներից ուղարկվում են ԼՂԺԺԺ-ին... Մի բան էլ կայ: Եպիսկոպոսների ընտրութիւնը պէտք է լինի կառավարութեան հաւանութեամբ: Նրանց նշանակելը և հարկաւորած ժամանակ փոխելը պաշտօնական բաւական երկար պրոցէ-դուրա ունի: Մինչդեռ վարդապետների վերաբերութեամբ այդքան հոգանք պէտք չեն: ԼՂԺԺԺ-ինը կարող է ցանկացած ժամանակ նշանակել, ցանկացած ժամանակ փոխել... Շուշու եկեղեցական և վանքային կալուածների վէճերը տեղային յաջորդ-վարդապետի և զպրոցի հոգաբարձութեան մէջ, Լիւբանի վէճերը, Ալեքսանդրապոլի վէճերը, Ախալցխայի վէճերը, Բեսարաբիայի վէճերը և այլ զանազան վիճակներում պատահած վէճերը բաւական չօգտակալ փաստեր են մեր ասածների համար...

Վերջապէս ամեն վիճակներից ԼՂԺԺԺ-նը աշխատում է փողերը քաշել՝ դէպի ինքն, այն փողերը, որոնք պահպանում են բազմաթիւ գաւառական դպրոցների գոյութիւնը:

Ասում են, որ Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Նաւապետեանը, զլիաւորապէս հէնց այդ նպատակով կանչված է եղել ԼՂԺԺԺ-ին, որ նրա հետ խորհուրդ անեն, թէ ինչ հնարքով կարելի կը լինէր և Ներսիսեան դպրոցի հարուստ արդիւնքները սեփականացնել ձեռնարանին: Ասում են Նաւապետեանը պատասխանել է, թէ այդ անհատին կը լինի մինչև որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ոչնչացրած չը լինի:

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յուլիսի 13

Մեզ՝ ուսումնայեւրոպ. համար այնպիսի խոչընդոտներ չը գտնվեցան, որոնց առաջ բերելով, ունենք արդարացնում են Կ. Պոլսի աղբային ժողովի մերժելը պ. Կիւլորթի առաջարկութիւնը: Այո, բնական է, փափկամտունդ պոլսեցիների քաղաքական խտրողանքը թղթ չը տուց ընդունելու այս առաջարկութիւնը, բայց, ըստ մեր կարծեաց, նրանք կարող էին գոնեա իմաց անել իր ժամանակին ուսումնայեւրոպ. որ մենք կատարէինք, որպէս այժմ, այս անհրաժեշտ ազգային պահանջը... Հէնց այն օրից, երբ պ. Կիւլորթի մտադրութիւնը յայտնվեց «Մշակի» էջերից, մեր հասարակութիւնը մեծ համակրութեամբ ընդունեց նրան: Նայելով այն արձագանքներին, որք յայտնվում են մեր պարբերական մամուլի միջոցով, մնում է որ յարգելի արևելագէտը նշանակէր իր լրագրի բաժանորդագիրն ու սկսէր իր գործը:

Քանի որ այս լրագիրը լայն տեսնելու վրա է և եղել է մեր օրական խնդիրներից մէկը, աւելորդ չենք տեսնում սրա առիթով մի քանի խօսք աւել, ևս առաւել երբ սա ձգձգվում է աջ ու ձախ և օպոտիմիստութիւնը լայնատարած ու պողպատե հող է դառն իր դարգացման համար: Հետեւալ ոչ նուազ մեծափառ և ոչ նուազ սըր-տաշարժ դատողութիւնը կապացուցանէ մեր ասածը: «Եթէ մտաբերենք որ յայնքը հարկը հաղարներ են վառնել եւրոպական լրագիրների վրա իրանց ձգուումները իրագործելու համար, այն ժամանակ կը տեսնենք որ պ. Կիւլորթի մեզ ուղղած պահանջը համեստ է, բայց սրանից